

**ՆԵՐՂՐՅԱԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԱՆԳԼԵՐԵՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ**

Ինչպես հայտնի է, խոսքում՝ գրավոր, թե բանավոր, հաճախ հանդիպում են այնպիսի տարրեր, որոնք շարակարգային կապի մեջ չեն նախադասության հիմնական խոսքաշարի հետ, ինչպես նաև ուղղակիորեն կապված չեն դրա բովանդակության հետ, բայց նայնպես կատարում են որոշակի գործառույթ: Այդպիսի տարրերից են *ներդրյալ կառույցները*: Լեզվաբանական գրականության մեջ ներդրյալ կառույցները (inserted clauses) հաճախ նույնացնում են *միջանկյալ* կառույցների հետ (parenthetical constructions) և միավորում են դրանք մեկ անվան տակ՝ parenthetical insertions¹: Բ. Իլիշը տարբերակում է միջանկյալ նախադասությունները ներդրյալ նախադասություններից, սակայն համարում է, որ «նրանց գործառույթը նույնն է, ինչ միջանկյալ կառույցների գործառույթը պարզ նախադասությունում»²: Նույնացնելով միջանկյալ կառույցները ներդրյալ կառույցների հետ՝ Օ. Ալեքսանդրովան և Ս. Տեր-Մինասովան նշում են, որ վերջիններս «հաղորդում են երկրորդական տեղեկատվություն և դրանք նույնիսկ կարելի է հանել խոսքաշարից առանց իմաստային որևէ փոփոխության»³: Մենք գտնում ենք, որ դրանց միջև էական գործառական տարբերություն կա: Ինչպես իրավացիորեն նշում է Օ. Ախմանովան, «ներդրյալ կառույցները սովորաբար պարունակում են մեկնաբանություն առ այն, ինչ հաղորդվում է ասույթի հիմնական մասում, կամ արտահայտում են տեղեկատվություն, որը հանկարծակի հիշեց հաղորդակցվողը, ինչն առաջացնում է ընդհատում»⁴:

Կարելի է փաստել, որ ներդրյալ կառույցներն արտահայտում են լրացուցիչ տեղեկատվություն, բայց հաճախ կատարում են *մեկնաբանող* գործառույթ: Բաշխումային առումով, ներդրյալ կառույցներն անմիջապես հաջորդում են այն հատվածին, որին վերաբերում է տվյալ ներդրյալ կառույցը: Այդ բաշխումային առանձնահատկությամբ պայմանավորված՝ ներդրյալ կառույցները նախադասության մեջ միջադաս դիրք են զբաղեցնում՝ ի տարբերություն միջանկյալ կառույցների, որոնք նախադասության մեջ կարող են զբաղեցնել ցանկացած դիրք՝ առաջադաս, միջադաս և վերջադաս: Դրանով հանդերձ՝ ներդրյալ կառույցները *գրավոր* խոսքում չեն խախտում նախադասության շարակարգային

¹ **Александрова О., Комова Т.** Современный английский язык: Морфология и Синтаксис, Москва, 1998, էջ 184; **Alexandrova O., Ter-Minasova S.** *English Syntax (Collocation, Colligation and Discourse)*, MSU, 1987, էջ 123-125:

² **Ilyish B.** *The Structure of Modern English*, Ленинград, 1971, էջ 304:

³ **Alexandrova O., Ter-Minasova S.** *English Syntax (Collocation, Colligation and Discourse)*, MSU, 1987, էջ 125:

⁴ **Akhmanova O.** *Patterns and Productivity*, MSU, 1973, էջ 98:

հարաբերությունները, ինչպես նաև նախադասության իմաստային ամբողջությունը: Նախադասության շարահյուսական և իմաստային ամբողջությանը նպաստում են նաև կետադրական նշանները, որոնք հստակ առանձնացնում են ներդրյալ կառույցը տվյալ նախադասության հիմնական մասից:

Սակայն առ այսօր ներդրյալ կառույցները ուսումնասիրել են հիմնականում գրավոր խոսքում: Բանավոր հանպատրաստից խոսքում ներդրյալ կառույցները առանձնանում են մի շարք գործառական դրսևորումներով, որոնք տարբերակում են դրանք գրավոր խոսքում կիրառվող ներդրյալ կառույցներից: Մասնավորապես, բանավոր հանպատրաստից խոսքում ներդրյալ կառույցները կարող են հնչել ցանկացած պահին՝ դրանով իսկ առաջացնելով շարահյուսական “վթարներ”, այսինքն՝ վերջիններս կարող են խախտել շարակարգային հարաբերությունները, մի բան, որը տեղի չի ունենում գրավոր խոսքում: Դա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ հաղորդակցվողը կարող է ցանկացած պահին հիշել և անմիջապես հնչեցնել այն տեղեկատվությունը, որն արտահայտված է ներդրյալ կառույցով: Կախված իրենց հաղորդակցական կարևորությունից և մի շարք այլ գործոններից՝ ներդրյալ կառույցները կարող են ստանձնել տարաբնույթ շարահյուսական ձևեր:

Սույն հոդվածում կներկայացնենք ներդրյալ կառույցների գործառական առանձնահատկությունների վերլուծությունը զուգադրության լույսի ներքո, մասնավորապես՝ երկու տիպաբանորեն տարբեր լեզուների՝ անգլերենի և հայերենի զուգադրությամբ: Որպես փաստական նյութ՝ վերլուծության համար օգտագործել ենք ոչ պաշտոնական հարցազրույցներ, որոնք անցկացրել ենք լեզվակիրների հետ ԱՄՆ-ի, Անգլիայի և Հայաստանի տարբեր քաղաքներում: Ինչպես ցույց է տվել մեր փաստական նյութը, ներդրյալ կառույցները հանպատրաստից բանավոր խոսքում կարող են տարաբնույթ արտահայտումներ ստանալ՝ պայմանավորված տարբեր գործոններով, ուստի ներդրյալ կառույցների առանձնահատկությունները կներկայացնենք առանձին-առանձին:

Ինչպես արդեն նշվել է, բանավոր հանպատրաստից խոսքում ներդրյալ կառույցները, հայտնվելով խոսքաշարում, առաջացնում են շարահյուսական վթարներ և որպես դրա հետևանք՝ շարահյուսական հատույթներ՝ խախտելով նախադասության ներքին շարակարգային հարաբերությունները: Ընդ որում, ներդրյալ կառույցից հետո խոսքաշարը կարող է շարունակվել ընդհատված մտքով: Բերենք օրինակներ մեր փաստական նյութից (ներդրյալ կառույցները նշված են շեղատառերով).

1. They still have to .. children, they still have to look after the home, because **they tend to be the ones who.. whether through nature or not they still tend the ones that** are capable a lot more or more capable or, perhaps, are more used to it. (interview with Ch. Tiplady)
2. **For example**, there are **more women** today who feel it's possible,.. and we do work

*within certain industries, **for example, you see more women*** bus drivers, taxi drivers, whereas that was before, for example, in my profession, mechanics, for example, as well, you read or you see female mechanics who are working. (interview with Ch. Tiplady)

Օրինակներից երևում է, որ ներդրյալ կառույցներից հետո (whether through nature or not; and we do work within certain industries) խոսքաշարը շարունակվում է մինչ այդ ընդհատված խոսքաշարով, սակայն որոշակի բառային փոփոխություններով (they tend to be the ones *who* – they still tend the ones *that*; for example, *there are* more women today – for example, *you see* more women): Ինքնին հասկանալի է, որ բնական, հանպատրաստից խոսքում հաղորդակցվողը որոշակի դադարից հետո չէր կարող նույնությամբ վերականգնել խոսքաշարը, ուստի ներդրյալ կառույցին հաջորդող խոսքաշարը հնչում է բառային որոշակի փոփոխությամբ: Գործաբանական առումով, օրինակներում ներդրյալ կառույցներն արտահայտում են լրացուցիչ տեղեկատվություն:

Հարկ է նշել, որ ներդրյալ կառույցներն ունեն արտահայտման տարբեր ձևեր և ընդարձակման տարբեր աստիճաններ՝ բառակապակցություն (whether through nature or not) կամ նախադասություն (and we do work within certain industries): Կարելի է ենթադրել՝ որքան ընդարձակ է ներդրյալ կառույցը, այդքան փոփոխված կլինի դրան հաջորդող ընդհատված խոսքաշարը:

Սակայն միշտ չէ, որ ներդրյալ կառույցին հաջորդող բառը կամ բառակապակցությունը տարբերվում է ներդրյալ կառույցին անմիջապես նախորդող բառից կամ բառակապակցությունից: Մեր փաստական նյութը ցույց է տալիս, որ ընդհատումից հետո խոսքաշարը կարող է շարունակվել նույն բառով, ինչ մինչ ընդհատումը: Դա, որպես կանոն, տեղի է ունենում, երբ խոսքաշարն ընդհատվում է մեկ բառով: Բերենք օրինակներ անգլերենի նյութից:

1. So, **my mother...**, *you know, they had four children*, and **my mother** in the early days, certainly, spent time looking after the family,... (interview with L. Heslop)
2. So, **the colleges...**, *whichever their character*, **colleges** set out their machine standards. (interview with S. Kerr)
3. I've been living in Newcastle since 1998. I used to live in... in the South, which is a little bit different, but um. Newcastle is more . industrial city, maybe, **but..** *I mean in the past it was more male dominated, sutty, it's got background in industry,*
K.V. Shipbuilding.
C.P. *Shipbuilding and things like that um. you know, where, you know, the men worked, the women stayed at home um....*
K.V. Ok.
C.P. **but** I haven't had that experience, so... (interview with C. Preston)
4. The other problem is that um. extended family, for example, **grandparents...**, *I am*

a grandparent, I am still working. So, I do not have free time . to look after the children, because I still have.. because the.. the age for retirement in the UK gets higher and higher and higher. So, it's now sixty two for me, then it will be sixty six sixty seven. So **grandparents** are not available to look after the children. (interview with Sheily)

Ինչպես երևում է օրինակներից, ներդրյալ կառույցին հաջորդող խոսքաշարը սկսվում է նույն բառով, որով ընդհատվել է խոսքաշարը (my mother – my mother, the colleges – colleges, but – but, grandparents – grandparents): Եթե առաջին և երկրորդ օրինակներում ներդրյալ կառույցներն իրենց ընդարձակությամբ աչքի չեն ընկնում, ապա նույնը չի կարելի ասել երրորդ և չորրորդ օրինակների մասին: Դա մասամբ պայմանավորված է նրանով, որ ներդրյալ կառույցները սույն օրինակներում կատարում են տարբեր գործառույթ: Մասնավորապես, առաջին օրինակում you know, my mother had four children ներդրյալ կառույցը իր գործառույթով արտահայտում է զուտ լրացուցիչ տեղեկատվություն: Երկրորդ օրինակում whichever their character ներդրյալ կառույցն ունի զիջման իմաստ: Երրորդ և չորրորդ օրինակներում ներդրյալ կառույցները կատարում են մեկնաբանող գործառույթ: Հաղորդակցվողները ցանկանում են մեկնաբանել իրենց խոսքաշարի որոշ բառերի կիրառությունը: Մասնավորապես, երրորդ օրինակում հաղորդակցվողը մեկնաբանում է “industrial” բառը և դրա առնչությունը Նյուքասլի՝ որպես արդյունաբերական և ըստ այդմ տղամարդկանց գերակայությամբ քաղաքի հետ: Մեկնաբանողական գործառույթի մասին է խոսում նաև ներդրյալ կառույցի սկզբում կիրառված I mean արտահայտությունը: Չորրորդ օրինակում I am a grandparent, I am still working ներդրյալ կառույցի առաջին երկու նախադասություններն արտահայտում են լրացուցիչ տեղեկատվություն, իսկ դրանց հաջորդող խոսքաշարը, ըստ էության, մեկնաբանում է դրան նախորդող խոսքաշարը, որը սկսվում է մինչ այդ ընդհատված grandparents բառով:

Ընդհատումից հետո խոսքաշարը նույն բառով սկսելը թերևս կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ընդհատված հատվածն արտահայտված է մեկ բառով, ուստի ընդարձակ խոսքաշարից հետո նորից վերադառնալ ընդհատված բառին դժվար չէ:

Նմանատիպ դեպքեր գտնում ենք նաև հայերենում, բայց ավելի սակավաթիվ քանակով, քան անգլերենում՝

1. Որտեղ պահանջվում է դայակի, խոհարարի, ինչու չէ, նաև սպասավորի աշխատանքներ, ապա **այդտեղ.. և բնական է, որ դրանք քիչ վարձատրվող աշխատանքներ են, այդտեղ** արդեն լինում է այդպես, որ ընտանիքից աշխատում է կինը... (հարցազրույց Ն.Կ.-ից)
2. Եվ ներկայումս տեսնում եմ **և.. ը. ոչ պետական կառուցվածքներում, բայց մասնավոր կառուցվածքներում** այդ երիտասարդները՝ **և** աղջիկները և տղաները լավ էլ վարձատրվում են (հարցազրույց Ն.Կ.-ից)

Երկու օրինակներում էլ ներդրյալ կառույցները (*և բնական է, որ դրանք քիչ վարձատրվող աշխատանքներ են; ոչ պետական կառուցվածքներում, բայց մասնավոր կառուցվածքներում*) արտահայտում են լրացուցիչ տեղեկատվություն: Հարկ է նշել, որ երկրորդ օրինակում ներդրյալ կառույցից հետո խոսքաշարը շարունակվում է ոչ թե անմիջապես *և* շաղկապով, այլ *այդ երիտասարդները* բառակապակցությամբ, որը վերաբերում է դրան հաջորդող *և՛ աղջիկները, և՛ տղաները* հատվածին:

Թե՛ անգլերենի, թե՛ հայերենի փաստական նյութը վկայում է, որ երբեմն ներդրյալ կառույցից առաջ ընդհատված խոսքաշարը ներդրյալ կառույցից հետո կարող է կրկնվել մասնակիորեն, օրինակ՝

One of the group,... *as, probably, you will be married at some time in the near future, so .. usually the group* will all be boys and that's the case that's called "stark party", if it's all girls, it's called "hen party". (interview with L. Heslop)

Երբ արդեն նոր հասարակարգում էր, **արդեն այս հասարակարգը .. ես չեմ ուզում որակարգել էս պահին հասարակարգերը**, բայց բոլոր դեպքերում **արդեն այս դերի խնդիրը** մի քիչ բարդացրեց, որովհետև այլևս չապահովվելով համապատասխան աշխատատեղ, կտրուկ, ասենք, նրա համար չսահմանել այս ինչ տեղը, բայց նրանց թողեց ազատ (հարցազրույց Հ.Հ.-ից)

Ինչպես երևում է օրինակներից, ներդրյալ կառույցներից (*as, probably, you will be married at some time in the future, ես չեմ ուզում որակարգել էս պահին հասարակարգերը*) հետո հաջորդող խոսքաշարը իրացվում է մասնակիորեն (*one of the group – the group, արդեն այս հասարակարգը – արդեն այս դերի խնդիրը*):

Երկու լեզուներում էլ հանդիպում ենք այնպիսի դեպքերի, երբ ներդրյալ կառույցին հաջորդող խոսքաշարը շարունակվում է ոչ թե ընդհատված, այլ *հոմանիշային* կամ *փոխարինող* բառով՝

Many large organizations.. *I used to work for the government, I was a civil servant, and they* have the provision for what we call "paternity leave". (interview with L. Heslop)

1. Եվ եղ **երիտասարդները**, ովքեր.. *ներքին կարգի ուժը նրանց թույլ է..* եղբան **նրանք** աշխատել են իրենց վրա, հիասթափություն են ապրում:
(հարցազրույց Ն.Կ.-ից)

2.....որը, այո, հոգեբանորեն **ազդում է..** *որքան էլ որ կինը լինի ը. բարձր մակարդակի անձնավորություն,* բայց թե **արտահայտվում է** անձնական հարաբերություններում, որը բերում է ամուսնալուծություններին, դա արդեն ազդում է նաև երեխաների վերաբերմունքի մեջ իր հոր նկատմամբ, և սա արդեն բերում է մեծ-մեծ պրոբլեմների: (հարցազրույց Ն.Կ.-ից)

Երկու լեզուների օրինակներում նկատում ենք բառերի փոխարինում ներդրյալ կառույցներից հետո, սակայն դրանց դրսևորումները, կարծում ենք, որոշակիորեն տարբեր են: Մասնավորապես, անգլերեն օրինակում many large organizations բառակապակցությունը ներդրյալ կառույցից հետո փոխարինվում է they անձնական դերանունով, քանի որ իր վերաբերյալն ունի նույն անվանական արժեքը, ուստի հարկ չկա նորից կրկնել many large organizations ընդարձակ բառակապակցությունը:

Հայերեն օրինակում *ազդել* բայը փոխարինվում է *արտահայտել* բայով, քանի որ ունի հոմանիշային իմաստ:

Հայերենում հանդիպում ենք դեպքերի, երբ ներդրյալ կառույցն ընդհատում է խոսքաշարը, իսկ հաջորդող խոսքաշարը ընդհատված խոսքաշարի շարունակությունն է.

Ոչ մեկը թող չվիրավորվի՝ **ոչ կոմունիստական առաջնորդներից.. ես ինքս պարտկոմ եմ եղել ֆակուլտետի, 6 տարի կուսակցության անդամ եմ եղել, ոչ մի սրբություն** ինձ համար, ինձ համար մերժելի չէ: (հարցազրույց Է.Կ.-ից)

Սույն օրինակի առանձնահատկությունն այն է, որ, ի տարբերություն այլ օրինակների, ներդրյալ կառույցին հաջորդող խոսքաշարն ընդանում է առանց բառային կրկնողության, փոխարինման կամ ընդհատված խոսքաշարի հետ շարակարգային կապերի խախտման: Վերջին հանգամանքը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ տվյալ դեպքում տեղի է ունենում ընդհամենը խոսքաշարի ընդհատում, բայց ոչ շարահյուսական վթար:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ ներդրյալ կառույցները հանպատաստից բանավոր խոսքում ունեն տարաբնույթ դրսևորումներ և այդ դրսևորումներով հանդերձ տարբերվում են գրավոր խոսքում կիրառվող ներդրյալ կառույցներից: Զուգադրական առումով կարելի է ասել, որ երկու լեզուներում էլ գերիշխում են ներդրյալ կառույցների զուգաձև հատկանիշները թե՛ քանակական, թե՛ որակական առումով, քանի որ, ինչպես փաստում են մեր տվյալները, ներդրյալ կառույցների արտահայտման միջոցները և դրանցով պայմանավորված խոսքաշարային դրսևորումները առկա են երկու լեզուներում և չեն ենթադրում հատուկ լեզվամշակութային դրսևորումներ:

K.Velyan – Functional peculiarities of inserted clauses in spontaneous talk in English and Armenian. The article covers the distinctive properties of inserted clauses met in spontaneous spoken English and Armenian. The main focus of the coverage is on the formal and distributional properties of inserted clauses, as well as functions manifested by inserted clauses. As the analysis reveals, inserted sentences can be expressed by a whole range of syntactic means, including simple sentences, composite sentences and even extended suprasentential constructions. Inserted clauses in spontaneous language, as opposed to those in written language, tend to break integral syntagmatic relations in utterances, thus generating syntactic fragments. When appearing in spontaneous spoken discourse, inserted clauses manifest specifying and additive functions. In terms of contrastive analysis of inserted clauses in English and Armenian, we mostly observe functional convergences rather than divergences.

К. Велян – Функциональные особенности вставочных конструкций в английской и армянской спонтанной речи. В статье рассматриваются отличительные свойства вставочных конструкций в спонтанной английской и армянской речи. В центре внимания формальные и дистрибутивные свойства вставочных конструкций, а также функции, выполняемые вставочными конструкциями. В формальном плане вставочные

конструкции выражаются простыми предложениями, сложными предложениями, а также сверхфразовыми единствами. Как показывает анализ, вставочные конструкции в спонтанной речи, как правило, нарушают синтагматические отношения в пределах высказывания, тем самым вызывая синтаксические фрагменты. Появляясь в высказываниях, вставочные конструкции выполняют поясняющую и дополнительную функции. В плане сопоставления функциональных особенностей вставочных конструкций в английском и армянском языках, мы обнаруживаем больше конвергентные черты, чем дивергентные.